ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«23» 07 2024 թ.
N 0383

Հասցե ՀՀ, ք Վանաձոր, Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
էլ. փոստ vanmedicalcenter@mail.ru, կայք www.vanmc.am

«ԱԳԱՍՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին/

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի հունվարի 15-ին կնքված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար N ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/5-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրի /այսուհետ՝ Պայմանագիր/ համաձայն՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից բազմիցս տրվել են պատվերներ 76 չափաբաժնի համար՝ Մետրոնիդազոլ լուծույթ ն/ե կաթիլաներարկման 5մգ/մլ, 100 մլ, սակայն «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերության կողմից ապրանքը մատակարարվել է թերի կամ չի մատակարարվել: «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերությանը 11.07.2024թ. N 360 գրությամբ առաջարկվել է վերը նշված ապրանքը 5 /հինգ/ օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պատվիրված և դեռևս չմատակարարված ապրանքի ողջ քանակը:

Հաշվի առնելով, որ «ԱԳԱՍՏ» ՍՊ ընկերությունը էականորեն խախտել է պայմանագիրը՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 /հինգ/ օրից ավելի «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը 76 չափաբաժնի մասով՝ Մետրոնիդազոլ լուծույթ ն/ե կաթիլաներարկման 5մգ/մլ, 100 մլ:

Տեղեկացնում ենք նաև, որ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 1150004484110100 հաշվեհամարին ենթակա է գանձման 188430 (մեկ հրյուր ութսունութ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և 125620 (մեկ հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր քսան) ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Սույն ծանուցումը 24.07.2024 թվականին կհրապարակվի gnumer.am կայքով:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի պարտականությունները կատարող՝ *Մ. Հազրոյան*